«ՀԱՍՏԱՏՎԱԾ»

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
խորհրդի «27» մայիսի 2015թ.

թիվ 10/01Լ որոշմամբ

Խորհրդի նախագահ

Բարսեղ Բեգլարյան_____

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ

Ուժի մեջ է՝ 2015թ-ի մայիսի «27»-ից

ԲԱԺԻՆ I. ՆՊԱՏԱԿԸ, ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ, ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ՆՊԱՏԱԿԸ

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում գործող առևտրային բանկ, որն իրականացնում է գործունեություն ֆիզիկական և իրավաբանական անձանց ֆինանսական ծառայությունների մատուցման բնագավառում: Նշված գործունեության իրականացումը կապված է տեղեկատվության կառավարման հետ, որը հանդիսանում է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կարևորագույն ակտիվներից մեկը և կախված է տեղեկատվական անվտանգության ապահովումից, որն իրենից ներկայացնում է մի շարք այլ միջոցառումների համախումբ ուղղված տեղեկատվական ակտիվների գաղտնիության, ամբողջականության և հասանելիության ապահովմանը, տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգի շարունակական զարգացմանը և բարելավմանը:

ԳԼՈՒԽ 2. ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

2. Տեղեկատվական անվտանգության քաղաքականությունը տարածվում է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի բոլոր աշխատողների և բոլոր շահագրգիռ երրորդ կողմերի վրա:

ԳԼՈՒԽ 3. ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

3. Տեղեկատվական անվտանգության քաղաքականությունն առնչվում է հետևյալ հիմնական փաստաթղթերի հետ.
   1) ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հուլիսի 9-ի թիվ 173-Ն որոշմամբ հաստատված «Տեղեկատվական անվտանգության ապահովման նվազագույն պահանջների սահմանման վերաբերյալ» կարգ:
   2) ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Կանոնադրություն:
   3) ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ «Ռիսկերի կառավարման» Քաղաքականություն:
   4) ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2014 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ 12/06Լ-Հ որոշում՝ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ վարչակազմակերպական կառուցվածքի հաստատման մասին»:
   5) ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2013 թվականի հունվարի 8-ի թիվ 01/01Լ որոշում՝ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի նոր հաստիքացուցակի հաստատման մասին»:

6) ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2015 թվականի հունվարի 30-ի թիվ 02/01Լ-Հ որոշում՝ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Գլխամասային դրասենյակի հաստիքացուցակի հաստատման մասին»:
7) ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 11/01Լ որոշմամբ հաստատված «Իրավական ակտերի նախագծերի պատրաստման և ընդունման» Կարգ:
8) ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 11/02Լ որոշմամբ հաստատված «Բանկի տեղեկատվական ակտիվների դասակարգման և նույնականացման» Կարգ:
9) ԻՍՕ/ԻԷԿ 27001:2013 «Տեղեկատվական տեխնոլոգիաներ. Անվտանգության ապահովման մեխանիզմներ. Տեղեկատվական Անվտանգության Կառավարման Համակարգեր. Պահանջներ» ստանդարտ:

ԳԼՈՒԽ 4. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

4. Տեղեկատվական անվտանգության քաղաքականությունում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝
   1) ***Բանկ՝*** ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ:
   2) ***Քաղաքականություն՝*** Տեղեկատվական անվտանգության քաղաքականություն:
   3) ***ՏԱՊ՝*** Անվտանգության վարչության տեղեկատվական անվտանգության համար պատասխանատու:
   4) ***ՏԱԿՀ՝*** Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգ:

ԳԼՈՒԽ 5. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

5. Խմբագրություն 02, փոփոխություններ են կատարվել Քաղաքականության 2-րդ, 3-րդ, 8-րդ և 9-րդ կետերում:

ԳԼՈՒԽ 6. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

6. Քաղաքականությունը հավելվածներ չունի:

ԲԱԺԻՆ II. ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7. Քաղաքականությունը սահմանում է նպատակները, խնդիրները և մոտեցումները

տեղեկատվական անվտանգության բնագավառում, որով Բանկը ղեկավարվում է իր գործունեության մեջ:

8. ՏԱԿՀ-ի ներդրման և բարելավման շահագրգիռ կողմեր են հանդիսանում.
   1) Բանկի Խորհուրդը,
   2) Բանկի Վարչությունը,
   3) Բանկի Տնօրինությունը,
   4) Բանկի Հաճախորդները,
   5) Բանկի Գործընկերները:
9. ՏԱԿՀ-ի շրջանակներում իրականացվող գործառույթները տարածվում են Բանկի բոլոր կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների վրա: Կառուցվածքային ստորաբաժանումների ցանկը հաստատվել է Բանկի Խորհրդի 2014 թվականի սեպտեմբերի 5-ի «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ վարչակազմակերպական կառուցվածքի հաստատման մասին» թիվ 12/06Լ-Հ որոշմամբ և տեղադրված է Բանկի ինտերնետային կայքում հետևյալ հասցեով՝ https://www.araratbank.am/upload/up_files/Spirearm.pdf: Մասնաճյուղերի ցանկը տեղադրված է Բանկի ինտերնետային կայքում հետևյալ հասցեով՝ https://www.araratbank.am/about/about_316.html: Բանկի Գլխամասային գրասենյակի աշխատողների հաստիքացուցակը հաստատվել է Բանկի Խորհրդի 2015 թվականի հունվարի 30-ի «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Գլխամասային գրասենյակի հաստիքացուցակի հաստատման մասին» թիվ 02/01Լ-Հ որոշմամբ: Բանկի տարածքային ստորաբաժանումների հաստիքացուցակը հաստատվել է Բանկի Խորհրդի 2013 թվականի հունվարի 8-ի «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ նոր հաստիքացուցակի հաստատման մասին» թիվ 01/01Լ որոշմամբ:
10. Քաղաքականությունն ուղղված է հետևյալ նպատակների և մոտեցումների

    իրականացմանը՝
    1) բանկի հիմնական բիզնես-գործընթացների անընդհատության ապահովում,
    2) տեղեկատվական անվտանգության ոլորտում խախտումների արդյունքում հնարավոր կորուստների և վնասի հնարավորինս նվազեցում,
    3) տեղեկատվական անվտանգության ոլորտում խախտումների կանխարգելում,
    4) տեղեկատվության գաղտնագրման վերահսկում,
    5) գաղտնագրման բանալիների կառավարում,
    6) տեղեկատվության հասանելիության վերահսկում,

7) մաքուր սեղանի մոտեցում,
8) մաքուր էկրանի մոտեցում,
9) տեղեկատվական կրիչների ոչնչացման մոտեցում,
10) շարժական սարքերի անվտանգության մոտեցում,
11) համակարգչային ցանցերի անվտանգության մոտեցում,
12) գաղտնաբառերի կառավարման մոտեցում,
13) տեղեկատվության դասակարգում,
14) ֆիզիկական անվտանգություն,
15) ակտիվների ընդունելի շահագործում,
16) տեղեկատվության փոխանցում,
17) ծրագրային ապահովման տեղադրման և օգտագործման սահմանափակումներ,
18) կրկնօրինակում,
19) պաշտպանություն չարամիտ ծրագրերից,
20) խոցելիությունների կառավարում,
21) անձնական տեղեկատվության գաղտնիություն և պաշտպանություն,
22) բանկին ծառայություններ մատուցող կազմակերպությունների հարաբերությունների մոտեցում:

ԳԼՈՒԽ 2. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

11. Քաղաքականության 10-րդ կետում նշված նպատակների իրականացման համար Բանկում ներդրվում է ՏԱԿՀ, որը պետք է համապատասխանի.
    1) ԻՍՕ/ԻԷԿ 27001:2013 «Տեղեկատվական տեխնոլոգիաներ. Անվտանգության ապահովման մեխանիզմներ. Տեղեկատվական Անվտանգության Կառավարման Համակարգեր. Պահանջներ» ստանդարտի պահանջներին,
    2) Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջներին ու պայմանագրային պարտավորություններին,
    3) Բանկի ռիսկերի կառավարման քաղաքականությանը:
12. ՏԱԿՀ-ը կանոնակարգվում է Քաղաքականությամբ և դրա շրջանակներում ընդունված ներքին իրավական այլ ակտերով:
13. Բանկի ՏԱԿՀ-ի տարածման շրջանակները ներառում են Բանկի Գլխամասային գրասենյակը, տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումները, Բանկի գործունեության հետ առնչվող գործընթացները, Բանկի անձնակազմը, տեղեկատվության մշակման և պահպանման համակարգերը:
14. Բանկի բոլոր տեղեկատվական ակտիվները, ակտիվների տնօրինողները,

ակտիվների պահպանողները և օգտագործողները՝ ներառյալ սարքավորումները, ծրագրային ապահովումը, թղթային և էլեկտրոնային կրիչներում առկա տեղեկատվական ռեսուրսները, ենթակա են հաշվառման և դասակարգման՝ համաձայն իրենց կարևորության և հասանելիության մակարդակի:

15. Տեղեկատվական անվտանգության ռիսկերի պարբերաբար գնահատումն իրականացվում է համաձայն Բանկի «Տեղեկատվական անվտանգության ռիսկերի կառավարման» ընթացակարգի: Դրա իրականացման ժամանակ հաշվի են առնվում տեղեկատվական անվտանգության խոցելիության և սպառնալիքների հնարավորությունները և նրանց ազդեցության աստիճանը Բանկի բիզնես-գործընթացների, ֆինանսական դրության և գործարար համբավի վրա:
16. Տեղեկատվական անվտանգության ռիսկերի գնահատման արդյունքում մշակվում է ռիսկերի կառավարման պլան, ընտրվում և կիրառվում են տեղեկատվության պաշտպանության կառավարման միջոցներ, այդ թվում՝ ՏԱԿՀ-ի անվտանգության ապահովման կազմակերպչական, ֆիզիկական, տեխնիկական, ծրագրային և ծրագրաապարատային միջոցներ:
17. Բանկի տեղեկատվական ակտիվների ֆիզիկական պաշտպանության համար ՏԱԿՀ-ի գործունեության սահմաններում սահմանվում են անվտանգության գոտիներ և միջոցներ են ձեռնարկվում չթույլատրված մուտքի կանխարգելման նպատակով:
18. Բանկը ձգտում է հայտնաբերել, հաշվի առնել և արձագանքել տեղեկատվական անվտանգության բնագավառում տեղի ունեցած միջադեպերին՝ համաձայն սահմանված ընթացակարգերի:
19. Բանկում սահմանված են տեղեկատվական համակարգերի էական խափանումներից կամ արտակարգ իրավիճակներից կրիտիկական բիզնես գործընթացների անընդհատության ապահովման և ՏԱԿՀ-ի աշխատունակության հսկողության ընթացակարգեր:
20. Բանկի աշխատողները ստանում են այն տեղեկատվությանը հասանելիության հնարավորություն, որն անհրաժեշտ է իրենց ֆունկցիոնալ պարտականությունների կատարման համար: Բանկը պարբերաբար իրականացնում է տեղեկատվական անվտանգության բնագավառում աշխատողների տեղեկացում, ուսուցում և որակավորման բարձրացում:

ԳԼՈՒԽ 3. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԱԳՐՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ

21. Բանկում իրականացվում է տեղեկատվության գաղտնագրում:
22. Գաղտնագրման բանալիների կիրառելի երկարությունը առնվազն 128 բիտ է (инициализация):
23. Գաղտնագրման բանալիների երկարությունը պարբերաբար վերանայվում է անվտանգության ապահովման և արդիականացման շրջանակներում, որքանով որ թույլատրում է ընտրված գաղտնագրման տեխնոլոգիան:

ԳԼՈՒԽ 4. ԳԱՂՏՆԱԳՐՄԱՆ ԲԱՆԱԼԻՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

24. Բանկում գործող գաղտնագրման բանալիների և հավաստագրերի կառավարումը կատարվում է հետևյալ փուլերով՝
    1) բանալիի գեներացում գաղտնագրման համակարգերի համար,
    2) բաց բանալիների հավաստագրերի տրամադրում և ստացում,
    3) բանալիների տարածում,
    4) բանալիների պահպանում,
    5) բանալիների փոխարինում կամ թարմացում,
    6) վտանգված բանալիների հետ վարման որոշում,
    7) բանալիների չեղյալ հայտարարում,
    8) վնասված կամ կորցված բանալիների վերականգնում,
    9) բանալիների կրկնօրինակում և արխիվացում,
    10) բանալիների ոչնչացում,
    11) բանալիների հիմնական միջոցառումների լոգավորում:
25. Բանկում գործող գաղտնագրման բանալիների փոփոխվում են առնվազն վեց ամիսը մեկ անգամ:

ԳԼՈՒԽ 5. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ

26. Տեղեկատվության, տեղեկատվության մշակման համակարգերին չարտոնված հասանելիության պաշտպանության նպատակով Բանկում կազմակերպվում է տեղեկատվության և տեղեկատվության մշակման համակարգերի հասանելիության վերահսկում:
27. Բանկի աշխատակիցներին և անհրաժեշտության դեպքում պայմանագրային հիմունքներով սպասարկման անձնակազմին տեղեկատվությանը և տեղեկատվության մշակման համակարգերին հասանելիությունը տրվում է համաձայն Բանկում ընդունված համապատասխան իրավական ակտերի:
28. Չարտոնված հասանելիության կանխման նպատակով Բանկում կիրառվում է

անգործության ժամանակային սահմանափակում, որի արդյունքում ավտոմատ եղանակով արգելափակվում է համակարգը:

29. Բանկում առնվազն տարեկան կտրվածքով ստեղծվում է հանձնաժողով բաղկացած տարբեր ստորաբաժանումների ղեկավարներից և իրականացվում է իրավասությունների վերանայում՝ ստեղծելով տիպային իրավասությունների ցանկ՝ աշխատակիցների պաշտոնական պարտականություններին համապատասխան:

ԳԼՈՒԽ 6. ՄԱՔՈՒՐ ՍԵՂԱՆ ԵՎ ՄԱՔՈՒՐ ԷԿՐԱՆ

30. Տեղեկատվության չարտոնված հասանելիության պաշտպանության և արտահոսքի կանխման նպատակով Բանկում կիրառվում են հետևյալ մոտեցումները՝
    1) Ոչ աշխատանքային ժամերին Բանկի գլխավոր գրասենյակում և ստորաբաժանումներում բոլոր փաստաթղթերը պետք է պահվեն համապատասխան երկաթյա կամ այլ փակվող պահարաններում:
    2) Այն վայրերում, որտեղ անհասանելի են երկաթյա կամ այլ պահարաններ պետք է փակվեն սենյակների դռները՝ սենյակից դուրս գալու ժամանակ:
    3) Մուտք եղած համակարգիչները և այլ տեղեկատվության մշակման համակարգերը չպետք է լինեն առանց հսկողության:
    4) Համակարգիչների էկրանները պետք է տեղադրված լինեն այն դիրքով, որ կողմնակի անձանց հնարավոր չլինի դիտել էկրանի պարունակությունը:
    5) Համակարգչից հեռանալիս անհրաժեշտ է բլոկավորել համակարգիչը:
    6) Բանկի աշխատողները աշխատանքային օրվա վերջում պետք է դուրս գան համակարգիչներում ակտիվացրած բոլոր համակարգերից և անջատեն համակարգիչները:

ԳԼՈՒԽ 7. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՐԻՉՆԵՐԻ ՈՉՆՉԱՑՈՒՄ

31. Տեղեկատվության կրիչ է համարվում այն կրիչը, որի մեջ պահվում է տեղեկատվությունը: Այդ կրիչների ցանկին են պատկանում՝
    1) փաստաթղթերը,
    2) կոշտ սկավառակները,
    3) CD և DVD սկավառակները,
    4) մագնիսական կրիչները,
    5) ֆլեշ կրիչները,
    6) հիշողության քարտերը և այլն:
32. Համաձայն Բանկում գործող ընթացակարգի և տեղեկատվությունը

վերականգնելու հնարավորությունը բացառելու նպատակով կիրառվում է տեղեկատվության կրիչների ոչնչացման հետևյալ մոտեցումը՝

1) տեղեկատվության մաքրում/ջնջում, որն իրականացվում է DoD 5220.22-M ստանդարտի համապատասխան ծրագրային ապահովմամբ,
2) ֆիզիկական ոչնչացում, որն իրենից ներկայացնում է տեղեկատվության կրիչի այնպիսի կործանում, որի արդյունքում անհնար է դառնում տեղեկատվության վերականգնումը և կրիչի երկակի օգտագործումը:

ԳԼՈՒԽ 8. ՇԱՐԺԱԿԱՆ ՄՈԲԱՅԼ ՍԱՐՔԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

33. Շարժական (մոբայլ) սարքերը հանդիսանում են Բանկի բիզնես գործընթացի կարևորագույն տարր, սակայն նրանց շարժական լինելը դարձնում է նրանց ավելի խոցելի սարքերի գողության և տեղեկատվության արտահոսքի տեսանկյունից:
34. Նման խոցելիությունների նվազեցման և բացառման նպատակով և Բանկում գործող ընթացակարգի համաձայն կիրառվում է շարժական (մոբայլ) սարքերի պաշտպանության հետևյալ մոտեցումները՝
    1) շարժական (մոբայլ) սարքերի ֆիզիկական անվտանգության հսկողություն,
    2) վիրուսներից և այլ վնասակար ծրագրերից հակավիրուսային պաշտպանություն,
    3) շարժական (մոբայլ) սարքերի միջոցով Բանկի տեղեկատվության չարտոնված մուտքի վերահսկում:

ԳԼՈՒԽ 9. ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

35. Բանկի համակարգչային ցանցը հանդիսանում է կառավարման համակարգի, տեղեկատվության մշակման և փոխանցման կարևորագույն և անբաժանելի մաս, որի անվտանգության ապահովման նպատակով համաձայն գործող ընթացակարգերի Բանկում կիրառվում են վիրտուալ լոկալ ցանցեր (VLAN), միջցանցային էկրաններ, վիրտուալ մասնավոր ցանցեր, հակավիրուսային պաշտպանության համակարգ և այլ անվտանգության միջոցներ:

ԳԼՈՒԽ 10. ԳԱՂՏՆԱԲԱՌԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

36. Գաղտնաբառերի պաշտպանության և կառավարման նպատակով Բանկում կիրառվում են հետևյալ մոտեցումները՝
    1) արգելվում է պահպանել գաղտնաբառերը թղթի վրա, ծրագրային ֆայլի կամ շարժական սարքի մեջ,

2) այլ անձանց կողմից գաղտնաբառը կռահելու կասկածի դեպքում անհրաժեշտ է փոխել գաղտնաբառը,
3) Գաղտնաբառերի ստեղծման նվազագույն պահանջներն են՝
   ա. պետք է լինի հեշտ հիշվող ստեղծողի համար,
   բ. արգելվում է գաղտնաբառի ստեղծման ժամանակ հիմնվել անվան, հեռախոսահամարի կամ այլ տվյալի վրա, որը հեշտ կռահվող է այլ անձանց կողմից,
   գ. չպետք է լինի զգայուն բառարանային հարձակումների հանդեպ,
   դ. պետք է պարունակի թվային և տառային սիմվոլներ,
   ե. պետք է փոխարինվի առաջին գրանցման ժամանակ,
4) արգելվում է գաղտնաբառի տրամադրումը այլ աշխատակցի,
5) արգելվում է հիշեցնել գաղտնաբառերը համակարգչային ծրագրերում ավտոմատ մուտք գործելու նպատակով,
6) արգելվում է օգտագործել նույն գաղտնաբառը մի քանի համակարգերի համար:

37. Տեղեկատվական անվտանգության ապահովման նպատակով Բանկում համակարգչային տեխնիկայի և տեղեկատվության մշակման համակարգերի գաղտնաբառերը փոփոխվում են համաձայն Բանկում գործող ընթացակարգի:

ԳԼՈՒԽ 11. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

38. Տեղեկատվության պաշտպանության նպատակով, համաձան Բանկում ընդունված կարգի, կիրառվում է տեղեկատվության դասակարգում:

ԳԼՈՒԽ 12. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

39. Ֆիզիկական անվտանգության ապահովման նպատակով համաձայն Բանկում ընդունված ընթացակարգի կիրառվում է անվտանգության գոտիներ:

ԳԼՈՒԽ 13. ԱԿՏԻՎՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ

40. Տեղեկատվական ակտիվների պաշտպանության նպատակով՝համաձայն Բանկում ընդունված ընթացակարգի կիրառվում է ակտիվների ընդունելի շահագործման կանոններ:

ԳԼՈՒԽ 14. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄ

41. Տեղեկատվության պաշտպանության նպատակով, համաձայն Բանկում ընդունված ընթացակարգի, կիրառվում է տեղեկատվության փոխանցման

կանոններ:

ԳԼՈՒԽ 15. ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

42. Չարամիտ ծրագրերի տեղադրումից և օգտագործումից խուսափելու նպատակով Բանկում, համաձայն ընդունված ընթացակարգի, կիրառվում է ծրագրային ապահովման տեղադրման և օգտագործման սահմանափակումներ:

ԳԼՈՒԽ 16. ԿՐԿՆՕՐԻՆԱԿՈՒՄ

43. Տեղեկատվության կորստի բացառելու նպատակով, համաձայն Բանկում ընդունված ընթացակարգի, կիրառվում է տեղեկատվության կրկնօրինակում:

ԳԼՈՒԽ 17. ՉԱՐԱՄԻՏ ԾՐԱԳՐԵՐԻՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

44. Չարամիտ ծրագրերից պաշտպանության նպատակով Բանկում կիրառվում է ծրագրային ապահովման թույլատրելի ցուցակ՝ համաձայն Բանկում ընդունված ընթացակարգերի:

ԳԼՈՒԽ 18. ԽՈՑԵԼԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

45. Խոցելիությունների կառավարման նպատակով Բանկում կիրառվում են խոցելիությունների հայտնաբերման համակարգեր, որոնց հայտնաբերած տվյալների հիման վրա գնահատվում են տեղեկատվական անվտանգության ռիսկերը և արդյունքում, համաձայն Բանկում ընդունված ընթացակարգերի, այդ ռիսկերը կառավարվում և նվազեցվում են:

ԳԼՈՒԽ 19. ԱՆՁՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

46. Անձնական տեղեկատվության գաղտնիությունը և պաշտպանությունը Բանկում կիրառվում է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների:

ԳԼՈՒԽ 20. ԲԱՆԿԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

47. Այն կազմակերպությունների հետ, որոնք Բանկին մատուցում են ծառայություն և ունեն տեղեկատվությանը կամ տեղեկատվության մշակման համակարգերին հասանելիություն, պետք է կնքվեն տեղեկատվության չբացահայտման և գաղտնիության համաձայնագրեր:

ԲԱԺԻՆ III. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

48. Բանկի աշխատողները կրում են անհատական պատասխանատվություն ՏԱԿՀ-ի պահանջների պահպանման համար և պարտավոր են տեղեկացնել ՏԱՊ-ին տեղեկատվական անվտանգության ոլորտում հայտնաբերված ցանկացած խախտման վերաբերյալ:
49. Աշխատողների աշխատանքային պայմանագրերում և պաշտոնեական հրահանգներում սահմանվում է պատասխանատվություն ծառայողական փաստաթղթերի և գաղտնի տեղեկատվության պահպանման համար, որն աշխատողներին հայտնի է դառնում իրենց աշխատանքային պարտականությունների կատարման ընթացքում:
50. Բանկի ղեկավարությունն իրականացնում է Բանկի տեղեկատվական անվտանգության ընդհանուր կառավարում և ապահովում է անհրաժեշտ պայմաններ հետևյալի համար՝
    1) տեղեկատվական անվտանգության ռիսկերի գնահատմանը և տեղեկատվության պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացման,
    2) ՏԱԿՀ աշխատանքի արդյունավետության,
    3) տեղեկատվական անվտանգության ոլորտում Բանկի աշխատողների պարբերաբար ուսուցման և վերապատրաստման,
    4) ՏԱԿՀ բնականոն գործունեության համար անհրաժեշտ ռեսուրսների հատկացման:

ԳԼՈՒԽ 2. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

51. Բանկը կարևորում է ՏԱԿՀ շարունակական զարգացումը և բարելավումը:
52. Բանկի ղեկավարությունն ուղղակի պատասխանատվություն է կրում Քաղաքականության պահանջների կատարման և իրենց ենթակայության տակ գտնվող աշխատողների, ներառյալ պայմանագրային հիմունքներով աշխատանքներ իրականացնող և/կամ ծառայություններ մատուցող անձանց կողմից սահմանված պահանջներին համապատասխանության համար, ովքեր ունեն հասանելիություն Բանկի ենթակառուցվածքներին և իրենց պարտականությունների կատարման ընթացքում օգտվում են դրանցից:
53. Քաղաքականությունը կարող է տրամադրվել բոլոր շահագրգիռ կողմերին և տեղադրվել Բանկի պաշտոնական տեղեկատվական կայքում՝ քաղվածքի կամ ամբողջական տեսքով:
54. Քաղաքականության դրույթների կատարման նկատմամբ ընդհանուր հսկողությունն իրականացնում է Անվտանգության վարչությունը, իսկ վերահսկողությունը՝ Ներքին աուդիտի վարչությունը: